

Հյուրերը շրջեցին երեկոյան Երեւանում, եղան էջմիածնի Մայր տաճարում ու Զվարթնոցում: Այցելության վերջին օրը կայացավ մամուլի ասուլիս, որի ժամանակ Վիկտորյա Բալավաձեն նշեց. «Սիրով կմիանանք առաջարկված նախագծերին եւ մտածում ենք նաեւ համատեղ նոր նախագծի շուրջ նախադպրոցական հաստատությունների դաստիարակների համար, որպեսզի մեր մանկավարժները կարողանան բարելավել իրենց որակավորումը, քանի որ Վրաստանում խրախուսվում են բոլոր տեսակի կրթական փոխակերպական (տրանսֆորմացիոն) նախագծերը: Իսկ եթե պատկերացնենք, որ ապրում ենք քաղաք Երեւանում, ապա իմ երեք դպրոցահասակ երեխաների հետ կսովորեի միայն ձեր կրթահամալիրում՝ որպես ուսուցիչ ու ծնող»:

Ստորագրվեց «Հայ-վրաց հանրակրթական կամուրջներ» ծրագրով նոր համաձայնագիր, որով կողմերը պայմանավորվեցին համագործակցել մի շարք ոլորտներում:

- Շատ կարելու է, որ մեր հարաբերությունները լինեն, շարունակվեն ու զարգանան որպես մանկավարժական գործընկերություն, Երեւանում, Թբիլիսիում, անընդհատ մեղիայում...,- ընդգծեց երեւանյան կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանը:

Հատկանշական է, որ այս կրթական փոխանակումները գնալով նոր թափ են ստանում ու ավելի է ընդլայնվում համագործակցության շրջանակը հայ եւ վրաց ժողովուրդների մատաղ սերունդների եւ կրթության ոլորտի ներկայացուցիչների միջեւ: Մեր ցանկությունն է, որ սկիզբ առած այս անկեղծ բարեկամությանը ինչպես մասնագիտական բնագավառում, այնպես էլ՝ անձնական հարաբերություններում, շարունակվի եւ խորանա, որպեսզի բազմաձև մեր ժողովուրդներին իրար միացնող նորանոր կամուրջները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ